ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12. 1963 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

*Նոյեմբերի 25—27-ը Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ ժողովուրդների լենինյան բարեկամությանը նվիրված գիտական նստաշրջան։ Այն կազմակերպել էր ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտը՝ Ադրբեջանական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների և ՍՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Անդրկովկասի հանրապետությունների ֆիլիալների մասնակցությամբ։*

*Նստաշրջանը ներածական խոսքով բացեց Հայաստանի կոմպարտիայի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը։*

*— Եղբայրական հանրապետությունների համատեղ գիտական նստաշրջանները,— ասաց ընկ. Զարոբյանը,—դարձել են հիանալի արագիցիաներ։ Դրանք ունեն ոչ միայն կարևոր գիտական նշանակություն, այլև հանդիսանում են աշխատավորներին սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու կարևորագույն միջոցներից մեկը։*

*Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը դարձան ծաղկուն սոցիալիստական հանրապետություններ, վիթխարի հաջողություններ ձեռք բերեցին արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, գիտության զարգացման և աշխատավորների կյանքի ու կենցաղի վերափոխման բնագավառում։*

*Այնուհետև ընկ. Զարոբյանը նշեց, որ Անդրկովկասի երեք եղբայրական հանրապետությունների բարեկամությունը զոդվել է դեռևս բուրժուական նացիոնալիստների՝ մուսավաթականների, դաշնակցականների և վրաց մենշևիկների տիրապետության դեմ մղված պայքարի տարիներին, երբ Անդրկովկասը, Սերգո Օրջոնիկիձեի դիպուկ արտահայտմամբ, «նացիոնալիստական անսանձ հալածանքի և նացիոնալիստական բախումների ամենավայրագ ձևերի դրսևորման օրինակ էր»։*

*ՍՄԿԿ XXII համագումարից հետո մեր պարտիայի կենտկոմը մեծ աշխատանք կատարեց եղբայրական հանրապետությունների տնտեսական հարաբերությունների հետագա ամրապնդման, սոցիալիստական ազգերի է՛լ ավելի մերձեցման, տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում նրանց լիակատար միասնության հասնելու ուղղությամբ։*

*—Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը,—վերջում ասաց ընկ. Զարոբյանը,—մեր կոմունիստական հասարակարգի շարժիչ ուժերից մեկն է։ Ուստի, ամրապնդե՛նք այդ բարեկամությունը, ամեն ինչ անե՛նք պայծառ ապագան՝ կոմունիզմը, մոտեցնելու համար։*

*Գիտական սեսիայում լսվեցին հետևյալ զեկուցումները. «Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական համագործակցությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» (զեկ. ՍՄԿԿ Կենտկոմի Անդրկովկասի բյուրոյի նախագահ Գ. Բոչկարյով), «Սովետական իշխանության համար Անդրկովկասի աշխատավորների համատեղ պայքարի պատմությունից» (զեկ. Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Գ. Գարսյան), «Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն համագործակցության պատմությունից» (զեկ. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զ. Անճափաձե — Վրաստանից), «Սոցիալիստական ազգերի հետագա զարգացումը և մերձեցումը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» (զեկ. Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ի. Հուսեյնով), «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմական արմատները» (զեկ. ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ե. Աղայան), «Սովետական Միության կոմունիստական պարտիան ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության կազմակերպիչն ու ոգեշնչողն է» (զեկ. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյան), «Եղբայրական ընտա-*

նիքում» (զեկ. ՀԿՊ Լենինականի քաղկոմի քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղարիբջանյան), «Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը» (զեկ. Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Կարինյան*), «Սովետական Միության սոցիալիստական ազգերի հետագա զարգացման ու մերձեցման լենինյան կուրսը» (զեկ. Վրացական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գ. Բրեգաձե). «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը ադրբեջանական սովետական գրականության մեջ» (զեկ. Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Դաղաշզադե). «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ» (զեկ. բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Արեշյան), «Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների գործունեությունը աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության ասպարեզում կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» (զեկ. պատմական գիտությունների թեկնածու Կ. Ուդումյան).

ՍՄԿՊ Կենտկոմի Անդրկովկասի բյուրոյի նախագահ ընկ. Բոչկարյովը խոսելով Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական համագործակցության մասին նշեց, որ վերջին ժամանակներս արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի ասպարեզներում կիրառվեցին միջհանրապետական մի շարք համատեղ միջոցառումներ, որոնք ուղղված էին հանրապետությունների տնտեսական կապերի հետագա ամրապնդման, սոցիալիստական ազգերի և ազգային կուլտուրաների մերձեցման, աշխատավորներին կոմունիզմի և ինտերնացիոնալիզմի կենարար գաղափարների ոգով դաստիարակելու խնդիրների կատարման նպատակին։

Ռուս մեծ ժողովրդի և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ Անդրկովկասի հանրապետությունների աշխատավորների բարեկամությունն ու համագործակցությունը հանդիսացան սոցիալիզմի կառուցման գործում նոր հաջողությունների հասնելու կարևորագույն պայմանը։

Իրագործելով պարտիայի ցուցումները, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի պարտիական կազմակերպությունները մեծ աշխատանք են կատարում Անդրկովկասի աշխատավորների կուլտուրական համագործակցության և ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ։ Ավելի ու ավելի են ամրապնդվում գիտական հիմնարկների կապերը, կոորդինացվում է գիտական հիմնարկների գործունեությունը հրատապ շատ պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Սիստեմատիկաբար հանդիպումներ են ունենում Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների գրողները, կոմպոզիտորները։

Սեսիայի աշխատանքներին մասնակցում էին ՍՄԿՊ Կենտկոմի Անդրկովկասի բյուրոյի նախագահ Գ. Բոչկարյովը, Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը, Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը, հանրապետության Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը, ՍՄԿՊ Կենտկոմի պատասխանատու աշխատակից Ն. Սոֆինսկին, Մոսկվայի, Բաքվի, Թբիլիսիի, Երևանի և երկրի այլ քաղաքների նշանավոր պատմաբաններ, պարտիական ու սովետական ղեկավար աշխատողներ։

Գիտական սեսիայի արդյունքները ամփոփեց ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Կիմը։

* Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի զեկուցման համառոտագրությունը տպագրվում է «Տեղեկագրի» այս համարում։